№ 107 Յունիսի 17 Չինգշաբթի 1882 Յունիսի 17 Չինգշաբթի № 107

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ազգ. օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայեր և վրացիներ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Դէրբէնդից։ Նամակ Մեծ-Ղարաքիլիսայից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ «Голосъ» լրագրի թղթակցութիւնը։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԱՅԵՐ ԵՒ ՎՐԱՑԻՆԵՐ

Այս օրերս մենք ծանօթացրինք ընթերցողներին վրաց „Դրօէբա“ լրագրի յօդուածի հետ, որի մէջ լրագիրը համեմատութիւն է անում հայերի և վրացիների մէջ։

Վրաց թերթը ցոյց է տալիս հայերի գերազանցութիւնը ուսման և լուսաւորութեան գործում, ցոյց է տալիս նոյնպէս նրանց ձգտումը խնայել դրամական միջոցները, փոխանակ վրացիների նման վատնելու, նրանց յատկութիւնը բարեգործական նպատակով կտակներ անելու։ Մի և նոյն ժամանակ „Դրօէբա“ լրագիրը մեղադրում է վրացիներին, որ նրանք չեն սիրում ինքնաքննութիւն, վրդովվում են երբ յայտնվում են նրանց պակասութիւնները։

Գուցէ համեմատելով վրացիների հետ, հայերը բարձր են, բայց մենք էլ առհասարակ մի շատ օրինակելի ազգ չենք։ Մենք ինքներս լաւ գիտենք մեր պակասութիւնները։ Հայերը գոնէ այդ կողմից շատ բարձր են վրացիներից, որ համբերութեամբ տանում են իրանց մամուլի ինքնաքննող, մերկացնող ուղղութիւնը իրանց խոշոր պակասութիւնների մասին։

Հայը, ինչպէս և վրացին, սկզբից վրդովվում էր երբ նրա վրա յարձակվում էին, անխնայ մտրակում էին նրան, ցոյց էին տալիս նրա պակասութիւնները։ Գլխաւորապէս «Մշակն» էր այդ նոր ուղղութեանը հետևող և այդ է պատճառը որ մեր լրագիրը իր գոյութեան առաջին տարիներում իր դէմ յարուցեց բազմաթիւ և կատաղի թշնամիներ։ Բայց այժմ հայը ընտելացաւ այդ ուղղութեանը և համոզվեց թէ որքան օգուտ է տալիս հասարակական անձնաքննութիւնը, մտրակող ուղղութիւնը։ Այն ազգը որ դիմանում է խիստ, անխնայ անձնաքննութեանը, նա զօրեղ ազգ է, նա ապագայ ունի։

Նոյնը ցանկանում ենք և մեր հարևան ազգութեանը, վրացիներին։ Մենք ցանկանում ենք որ վերջապէս վրացիների մէջ էլ յայտնվի մի թերթ, որ սիրելով իր ազգը, իրան նպատակ դրէր մերկացնել իր ազգակիցների պակասութիւնները, ընդունէր անձնաքննական մտրակող ուղղութիւնը։

Եւ անպատճառ այդ պէտք է անի մի վրաց լրագիր։ Եթէ այդ աշխատանքը յանձն առնի հայը,—վրացիները կը վիրաւորվին, կընդունեն այդ տեսակ ուղղութիւն որպէս թշնամութիւն իրանց դէմ։

Մենք շարունակել ենք և միշտ կը շարունակենք մտրակող ուղղութեանը հետևել հայոց հասարակութեան վերաբերութեամբ. թող նոյնն անեն և վրացիները իրանց հասարակութեան վերաբերութեամբ։ Բաւական է արդէն անդադար յիշել միմիայն անցեալը, առանց այդ անցեալից էլ մի որ և է բարոյական դաս դուրս բերելու, այլ միմիայն հիանալով և պարծենալով անցեալով։ Ժամանակ է արդէն և ժամանակակից պահանջներ ծնեցնել ժողովրդի մէջ։

Այժմեան դարը պահանջում է լուսաւորութիւն։ Իսկ մեր վրացի եղբայրները գրեթէ չունեն սեփական դպրոցներ, նրանց մէջ գրեթէ անհետացել է մայրենի լեզուն, բացի սրանից նրանց զաւակները գրեթէ չեն էլ մտնում պետական դպրոցները։

Շատ լաւ է, օրինակ, ֆիզիկական ոյժը զարգացնել, բայց մտածել միմիայն ֆիզիկական ոյժը զարգացնելու, առանց ձգտելու ուսում տարածելու ազգի մէջ,—մեծ օգուտ չի տայ։

Մինչև որ հայոց երիտասարդ սերունդը լցնում է Անդրկովկասի թէ ազգային և թէ պետական դպրոցները, մինչև որ Թիֆլիսի կլասիկական գիմնազիայի 17 հոգի աւարտողների թւում 9 հոգի հայեր են,—այդ ժամանակ վրացիները, որոնք գրեթէ բացակայ են բոլոր դպրոցներից, սարքում են կռիւներ Թիֆլիսից ոչ հեռու գտնվող մի դաշտի վրա և հիանում են կուռողներով։ Եւ այդ կռիւներին հանդիսատես է լինում ոչ թէ միայն ամբոխը, բայց և վրաց ամենաբարձր ինտելիգենցիան։

Իսկ մի և նոյն ժամանակ գիմնազիայում աւարտող 17 հոգու մէջ, որոնցից 9 հոգի հայ են, ոչ մի վրացի երիտասարդ չը կայ։

Հաւատացնում ենք որ մենք մեր վրացի եղբայրներին անկեղծաբար լաւութիւն ցանկանալով գրում ենք ներկայ տողերը։ Ժամանակ է, վերջապէս, վրացիներին էլ զարթնել մտաւոր խոր քնից։

Մենք մի ժամանակ առաջարկել էինք որ մեր հայոց ազգային դպրոցներում աւանդվեր, այնտեղ որտեղ խառն ենք բնակվում վրացիների հետ, վրացերէն լեզուն, իսկ որտեղ թուրքերի հետ խառն ենք բնակվում, թուրքերէն լեզուն, որպէս զի մեր հարևանների հետ միասին սովորէինք մի և նոյն դպրոցներում, եթէ նրանք իրանք անընդունակ են հիմնել իրանց սեփական դպրոցները։

Ժամանակով վրացիները և թուրքերը գուցէ կը հասկանան որքան անկեղծ էին մեր մտքերը, իսկ հայերը կը հասկանան որքան անհրաժեշտ էր մեր առաջարկութիւնը, իսկ այժմ թող անեն ինչպէս կամենան. թող հետևեն մուշահիկռիւներին, փոխանակ ուսման։ Գուցէ ապագայում կը փոշմանեն իրանց արածի վրա։

Բայց եթէ այդպէս է, ինչի են մեղադրում հայերին, թէ նրանք երկրի նիւթական և մտաւոր ամբողջ ոյժը հետզհետէ իրանց ձեռքն են գցում։

Բայց մենք այնու ամենայնիւ հայերի պակասութիւնները շատ լաւ ենք հասկանում և չենք դադարի նրանց քննադատելու, նրանց վրա խստութեամբ յարձակվելու, նրանց անխնայ մտրակելու, չենք դադարի մեր լրագրի մէջ հայոց ազգի վերաբերութեամբ անձնաքննական, կրիտիկական մերկացնող ուղղութեանը հետևելու։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԷՐԲԷՆԴԻՑ

Մայիսի 20-ին

Դերբէնդի տնտեսական դրութիւնը, որ տորոնի անկումից յետոյ կատարեալ մնանկութեան էր հասած, փոքր առ փոքր սկսել է լաւանալ. բնակիչների մեծ մասը այգեգործութեան առատ արդիւնաբերութիւնը հասկանալով, սկսել է առանձին ուշ դարձնել տնտեսական այդ շահաւէտ նիւթի վրա, որից ստանում են էժանագին գինի և ըսպիրտ. այս վերջինիս համար քաղաքի մէջ կան երկու գործարաններ, որոնցից նշանաւորը անցեալ տարի կառուցել է հասարակութիւնը իր սեփական միջոցներով։ Շնորհաւորելով դերբէնդցիների այդ օգտաւէտ ձեռնարկութիւնը, ցանկանում ենք նրանց հանգիստ ու ապահով ապագայ։

Դառնալով Դերբէնդի առևտրական բաժնին, մենք մի տեսակ սարսուռ ենք զգում. մի քանի օտարական հայեր, որ վաճառականութեան զբաղվող մասը իրենց ձեռքին ունեն, շահի համար պատրաստ են յանձն առնել ամեն տեսակ ստորութիւն. նոքա, նշանաւոր, մարդկային յայտնի յատկութիւններից զուրկ լինելով, նմանվում են մի տեսակ հրէշների.... նոքա չունեն ոչ անձնասիրութիւն, ոչ պարտաճանաչութիւն և չը հասկանալով պատուասիրութեան վսեմ նշանակութիւնը, ամեն եղելութեան վրա նայում են հասարակ կէտից։ Նոցա մէջ, մասնաւոր բացառութեամբ, կարելի է հանդիպել ամենատոր ներկարարի, ոգէտ կօշկակարի, յիմար դերձակի, բռնակալ ձեռքի ներգործութեան տակ ստորացած գործակատարի և այլն և այլն, որոնք այսօր բաղդի բերմամբ վաճառականութեան ներկայացուցիչներ են կազմում այստեղ.... Նրանց համար մինչև անգամ պարծանք է համարվում տարեկան երկու երեք անգամ դարդակ ձեռքով Ռուսաստան գնալ, նիսիա ապրանք բերել, կիսագին վաճառել և այնուհետև պարտքերը չը տալ.... Նոցանից ոչ մէկը չունի ոչինչ մտաւոր զարգացումն, նա չունի նոյնպէս և կապ որ և է բարձր զարգացած շրջանի հետ. այդ պատճառով էլ իր արարքի վրա չէ կարմրում....: Ճշմարիտ է, անուս ոգէտ դասակարգից շատ պահանջելու իրաւունք չունենք, բայց միթէ պէտք է մոռանալ և ընութեան այն առատ ձիրքերը, որոնցով վարձատրվում է մարդկութիւնը։

Խօսելով օտարական բաղդախնդիրների կեղտոտութիւնների վրա, մենք չենք կարող լռութեամբ անցնել այն գովելի յատկութիւնները, որ ունի Դերբէնդի փոքրիկ հայ հասարարութիւնը. նա մի տեսակ սիրելի հասարակութիւն է, որ իմ կեանքի մէջ այնպէսը հաւիս թէ տեսած լինեմ. նրան կարելի է դասաւորել օրինակելի հասարակութեանց շարքերում. նրա հետ փոքր ի շատէ ծանօթութիւն ունեցող անհատի սրտում, ուր որ լինի նա, անմոռանալի կը տպագրվեն խորին յարգանք և անկեղծ համակրութիւն. նա հայելու պէս պարզ է և ունի բաւական զարգացած անդամներ համեստ ու քաղցր բնաւորութիւններով, որոնց մէջ կարելի է տեսնել սէր, բարեկամութիւն, անկեղծութիւն, անշահասիրութիւն և ուրիշ շատ գեղեցիկ յատկութիւններ, որ յատուկ են կատարեալ մարդուն։ Բայց ցաւօք սրտի պիտի ասենք, որ այստեղ էլ семья не безъ урода. Դերբէնդն էլ, ինչպէս ամեն հայաբնակ տեղ, ունի իր զզուելի ու կեղտոտ անհատներ, խարդախ ու ըստոր անձնաւորութիւններ, որոնց չունենալը ի հարկէ մեծ բաղդ էր մի փոքրիկ խաղաղ հասարակութեան համար։

Հինգ թէ վեց տարի առաջ Դերբէնդի պայծառ երկնքի տակ անսերևութաբար կազմվում էին երկու փոքրիկ հակառակ կուսակցութիւններ. դրա սկզբում շատ աննշան և թոյլ էին, բայց գնալով աւելի ոյժ ու նշանակութիւն էին ստանում.... ընիկ դերբէնդցին այդ չէր նկատում, անտեսական սարսափելի հարուածը այն աստիճան չը զգացրել էր նրան, որ նա իր շուրջը ոչինչ չէր տեսնում.... 1880 թուականի սկզբներում այդ կուսակցութիւնները այնքան աճել ու զարգացել էին, որ հասկացող դասի ուշադրութիւնը իրենց վրա էին հրաւիրում.... առաջը առնել, ուշ էր՝ նոքա հաստատ արմատներ ունէին։ Այժմ 1882 թուականում, այդ կուսակցութիւններին կարելի է կատարեալ նշանակութիւն տալ. բայց դերբէնդցին դարձեալ չէ խառնվում, նա ոչ մէկի կուսակիցը չէ, նա իր քեսիբութեամբն է զբաղված... դոցա կազմողները, օտարական հայերն են.... Կուսակցութիւնների պարագլուխները քաղաքիս երկու նշանաւոր անձներն են, որոնք միմանց հետ ունեցած անձնական հաշիւները առաջ տանելու համար, պիտի վրդովեն մի ամբողջ քաղաքի հանգստութիւնը.... Դրանցից մէկը, որ իր անխիղճ բամբասանքներով յայտնի է հասարակութեան, մի ինքնահաւան, գոռոզ, եսական է և ունի թոյլ կուսակիցներ. իսկ միւսը, որ վաղուց 'ի վեր արժանապատուութեան բաճկոնի տակ ծածկած ունէր իր պզերը, մի քահանայ է և ունի շատ կուսակիցներ. սրա (քահանայի) հլու հպատակն է և այն երևելի վաճառականութիւնը, որ վերը նկարագրեցինք։ Սա բացի քահանայական սուրբ պարտաւորութիւններից, ունի և շատ մասնաւոր պաշտօններ ու պարտաւորութիւններ. պարապվում է և փաստաբանութեամբ, վաճառականութեամբ, այգեգործութեամբ, մենավաճառութեամբ, զրախօսութեամբ. շատ հմուտ և ճարպիկ կերպով կարող է կեղտոտ գործին լուսաւոր ու փայլուն կերպ տալ համեստ ու բարեպաշտ ժողովրդի աչքում, սառնասրտութեամբ նրան յիմար անուանել. ափսոսալ, որ ինքը քահանայ է ոչ թէ մարդկանց, այլ ոչխարների և այլն....

Առ այժմ բաւականանալով այսքանով, մենք նպատակ չունենք որ և է նկատողութիւն անել հասարակութեան այդ ազնիւ առաջնորդներին.... Նրանք երկուսն էլ հասկացող եսականներ են. Նրանց քարոզելը դայլի գլխին աւետարան կարդալ կը դառնար։

Անտոն Մելիք-Դաղայեանց

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱՅԻՑ

Յունիսի 12-ին

Մեր հայ հրապարակախօսներից շատերը, աչքի առաջ ունենալով մեր խեղճ հայ ուսուցիչների ներկայ ցաւալի և աննախանձելի վիճակը, մի քանի անգամ խօսեցել են՝ նոցա ապագայ կեցութիւնը բարւոքելու համար միջոցներ առաջարկելով. իսկ թէ արձագանք է գտել թէ ոչ՝ այդ տակաւին պարբերական հրատարակութեանց մէջ կարդալու երջանկութիւնը չենք ունեցել։ Սակայն բաւական չէ որ այդ «ազգի» մշակների ապագան դեռ ևս ապահոված չէ, այլ մինչև անգամ բազմիցս դժբաղդութիւն ենք ունեցել լրագրների մէջ կարդալու մի որ և իցէ քաղաքի կամ գիւղի հոգաբարձութեանց անտարբեր վարմունքի մասին, որոնք հոգաբարձութեան սուրբ պաշտօնը ստանձնած ունենալով, չեն բաւականանում միայն ուսումնարանի անտեսական մասերի մէջ թոյլ և անպէտք գտնվելում, այլ և անխիղճ են գտնվում նաև գէպի ուսուցիչները, ամիսներով ռոճիկ չը վճարելով նոցա։— Պաշտօնատներում ծառայող ամենաստոր գրագիրը մինչև անգամ ուսուցիչներից ապահով է ապրում։ Գրագիրը, բացի 10—15 ր. ստանալուց, եռապատիկ օգտվում է նաև սուրան նորան կլպելով։ Սոյն յատկութիւնը յատուկ է ոչ միայն գրագիրներին, այլ և միւս պաշտօնեաներին և նոյն իսկ մեր հոգևոր հովիւներին (բացառութեամբ միայն)։ Իսկ մի որ և իցէ ուսուցիչ կարող է և կը պատկանի նրան միթէ այդպիսի ստոր միջոցներով օգտվիլ։ Ի հարկէ, նիսիա ուսուցչութիւն անողներ էլ են գտնվում։ Ուսումնարանի դեկավարների անհոգութեան շնորհիւ, ուսուցիչը ճարահատեալ պէտք է նիսիա

առուտուր անի բաղարից, մի քանի ժամանակ անցնելուց զկնի, խանութպանը ընաւ չէ հարցնում թէ, «մսադ փող ունես՝ թէ չէ», այլ սառնասրտութեամբ իր առնելիքն է պահանջում: Այդ առևտրականների մէջ երբեմն այնպիսի պաղարիւն մարդիկ են լինում, որ իր առնելիքը պահանջած ժամանակ, երբ պատասխանը բացասական է լինում, օձիքից ամուր բռնում է և փողոցի մէջ լաւ լաղաթին խայտառակում: Այդ տըխուր տեսարանը կատարած ժամանակ, դաստիարակիչ կարելի է համարել նրան՝ որի շուրջը կանգնած՝ հանդիսատես են լինում այդ անախորժ պատկերին՝ նորա բազմաթիւ սաներից շատերը: Եւ այս ամեն դառն իրողութիւնների սկզբնապատճառը ով է լինում. շատ պարզ է, որ հոգաբարձութիւնը. վասն զի, երբ ամիսներով յետաձգած ռոճիկը ամօթխածութեամբ պահանջում ես, նա «փող չը կայ» է պատասխանում: Ուստի բընական է, որ խեղճ և թշուառ ուսուցիչը, խայտառակ լինելու դժբաղդութիւնը պէտք է ունենայ: Սա այնպիսի մի հարց է, որ արժանի լինելով թէ լրագրութեան և թէ մեր հայ հասարակութեան սուր ուշադրութեան, պէտք է որ մեր ուսումնարանաղբաղ ազգայինները անտես չառնէին, այլ իրենց ապագայ գործունէութեան մի ճիւղն էլ այս չինելով, աշխատէին մի կերպ վերջ տալ իսկապէս խեղճերին յատուկ անել վիճակին՝ ապահովացնելով նոցա սպառնացող ապագայ անմիխիթար կեցութիւնը: Ինչպէս վերը յիշեցի, այս հարցի վերաբերութեամբ բաւական խօսացվել և գրվել է. ուստի նամակս համառօտելով, նամանաւանդ ուժիցս վեր համարելով սորա վերաբերութեամբ երկար ու բարակ խօսելը, բաւական եմ համարում միայն հարցը նորից զարթեցնել, յուսալով, որ սա մեր դպրոցապետների ժողովներում արծարծելու մի կարևոր հարց կը դառնայ:

Մեր բանտարկեալները այսօր եօթը օր է ազատ օդ են ծծում մեր անապական և դրախտանման մաքուր Ղարաքլիսում: 12 հողին թողնված են 14 հազար բուբլ զալօգով:—Նոր քննիչը այսօր ութ օր է որ այստեղ է. հետզհետէ քննութիւնը լինում է. հետևանքի մասին անկասկած կը հաղորդենք մեր ընթերցողներին:—Ղարաքլիսան ամարանոց եկած օտարականներով բաւական կենդանութիւն է ստացել: Շատ լաւ կը լինէր, եթէ մեր ուսուցիչները դէպքից օգուտ քաղելով, բարեգործական նպատակով մի ներկայացում տային:

Փամբակեցի

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Մոսկվա, 3 մայիսի

Արդէն մի տարու չափ է, որ մեր մամուլի մէջ (մանաւանդ ձեր թերթում) երևում են երբեմնապէս հատ հատ լուրեր և յօդուածներ Մոսկվայի Լազարեան ճեմարանի մասին՝ Մոսկվայից կամ Պետերբուրգից հաղորդած: Հարկաւոր չէ մեծ խելք և հեռատեսութիւն, որ ուշադրութեամբ ընթերցողը նկատէ այդ բոլոր գրուածներում մի նպատակ—ոչ թէ գնահատելով հայոց այդ հնագոյն և անուանի ուսումնարանի նշանակութիւնը՝ նորա թերութիւնները ցոյց տալ խոհեմութեամբ, ինչպէս ուզում են իրանց յարձակմունքները քօղարկել լուր հաղորդողները,—այլ յատուկ այդ ուսումնարանը մատի փաթեթ չինելով՝ կրքերից զբաղված յարձակվիլ ճեմարանի մի քանի գործիչների վրա: Այդ է պատճառը, որ մի ամբողջ շարք «յարձակողական» գրուածների մէջ ոչինչ փաստ, ոչինչ ապացոյց դուք չէք գտնի. նոքա գրված են առհասարակ թռուցիկ պամֆլէտի ձևով—համառօտ և ոչ-հասկանալի: Կարևոր է նոյնպէս այն իրողութիւնը, որ բոլոր այս անթիւ բարեացակամութիւնները հաղորդվել են և հաղորդվում են լրագիրներին միշտ և միշտ անստորագիր, որով աւելի տեղիք են տալիս կասկածելու նոցա ճշմարտութիւնը և զորանով հաստատում են իրանց ծագումը արդարև թշնամական կրքերից, որոնք ընդ սմին պարզ ցոլում են այդ գրութիւնների ամեն մի տողի մէջ: Զրպարտութիւնը այն փանաքութեան (мелочность) հասաւ, որ յիշեալ բարեացակամները վերջին օրերս, ինչպէս գիտէք, հաղորդել էին ձեր լրագրին «հաստատ աղբիւրից առած», թէ Լ. ճեմարանի վերատեսուչը թարգմանում է Շեքսպիրի Օթելլոն: Ցաւոտի բան է, ինչպէս ստուգեցի, այս լուրն էլ, որպէս և առհասարակ բոլոր թռուցիկ պամֆլէտները Լ. ճեմարանի մասին, բոլորովին անհիմն դուրս եկաւ. բայց միթէ այս էլ միջոց է անձնական հաշիւների համար, միթէ լրագիրը խաղալիք է, որ՝ խաբելով նորան՝ գործիք չինենք մեր կրքերին—այսօր այս վերագրելով մէկին, վաղը այն—միւսին. մանաւանդ որ լրագրի խմբագրութիւնը չէ կարող թափանցել ամեն մի լուր հաղորդողի խորհուրդները, ևս առաւել, եթէ դոքա աշխատում են մեծ խնամքով քօղարկել թէ իրանց անունը և թէ բուն նպատակները...:

Իբրև նախկին աշակերտ Լազ. ճեմարանի չեմ կարող առանց սրտի ցաւի նայել այս բոլոր անտեղի և կեղծ բարեացակամութիւնների վրա և իբրև «Մշակի» հին թղթակից պարտք եմ համարում հրաւիրել ձեր ուշադրութիւնը այս հանգամանքների վրա, որոնք կարող են բոլորովին անծանօթ լինել ձեզ: Երևումէ կան անձինք, որոնք սրտացաւների դիմակ հագած, բայց իսկապէս լոկ անձնական կրքերից դրդված—ճգնում են ամեն կերպով ստուար ձգել Լ. ճեմարանի գործիչների վրա. երևում է կան անձինք, որոնք օգուտ քաղելով խմբագրութեան հեռաւորութիւնից և նորա գործին անտեղեակ լինելուց և իւրաքրն գործ դնելով նորա վստահութիւնը—իրանց նպատակի համար չեն արհամարհում այնպիսի միջոցները, ինչպէս շինծու լուրեր և անհիմն գրութիւններ տեղաւորել լրագիրների մէջ և՝ խաբելով խմբագրութիւնը՝ մոլորեցնել նաև ընթերցող հասարակութիւնը: Ցանկալի է, որ խմբագրութիւնը նկատողութեան առնէր այսպիսի ձգտումները և զգուշանար անկոչ սրտացաւների գրութիւններից, որոնք՝ լոյս տեսնելով անստորագիր և հաղորդելով ամեն մի անհեթեթ լուր,—օրին կարող են խաղալ և լրագրի դէմին: Եթէ յիշեալ գրողները իրէայի են հետամուտ և ոչ անձնական հաշիւների, եթէ դոքա վստահանում են հրապարակ դուրս գալ տալած խօսքով յանուն ճշմարտութեան (?), ինչու ուրեմն երկիւղ կրել սեփական ստորագրութիւնից. մինչդեռ ստորագրութիւնը գոնէ այս դէպքում կարող էր հաստատ գրական լինել նամակի ճշմարտութեանը և վաւերականութեանը թէ խմբագրութեան և թէ մանաւանդ հասարակութեան համար:

Բայց քանի որ յիշեալ գրութիւնները պամֆլէտի ձև ունեն, եթէ չասենք ինսինուացիայի, ընդսմին և անանուն ու անստորագիր,—հաղիւ թէ մէկը յանձն առնի ոչ միայն հիմնովին քննութեան ենթարկելու նոցա, այլ և հերքելու ևս:

Աւելի քան անաղնիւ է անձնական հաշիւների և կրքերի համար շարունակաբար բաղեր և փամփուշտներ թողնել լրագրութեան մէջ և միևնոյն ժամանակ ապահով կերպով քօղարկվիլ, թաղչիլ, որ ոչ ոք չիմանայ, թէ ո՞րտեղից են թռչում այդ բաղերը և փամփուշտները...:

Գր. Խալաթեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Շամախի, 8 յունիսի

Ուղարկելով սոյն երկտող նամակը, խնդարհաբար խնդրում ենք տեղ չնորհել նորան ձեր պատուական «Մշակ» լրագրիդ ներկայ համարներից մէկում:

Տեղւոյս Ս. Սանդխտեան օրիորդական վարժարանի հոգաբարձուքս սրբազան պարտք ենք համարում 'ի դիմաց միւս բոլոր անդամոց յիշեալ վարժարանի՝ հրապարակապէս մատուցանել մեր անկշռելի և անմոռանալի երախտագիտութեան ուղերձը շամախեցի (այժմս վերաբնակ Բագու) երկու եղբարց պ. պ. Կարապետ և Գէորգ Լալայեանցներին, որոնք ուղարկելով հոգաբարձութեանս անուամբ 200 բուբլի, 100-ական բուբլի իւրաքանչիւրը, բարեհաճեցին գրվել վարժարանիս ընկերութեանը անփոփոխ անդամ և այդպիսով մասամբ արդիւնաւորեցին մեր խնամատարութեանը յանձնած օրիորդական վարժարանի աղքատիկ դանձանակը: Մեզ քաղցր է կրկին անգամ յայտնել մեր խորին շնորհակալութիւնը նոցա համակրութեան համար այս սուրբ ու նուիրական գործին: Մենք յուսով ենք, որ մեր բաղուաբնակ շամախեցի միւս հարուստ հայերն ևս, կարդալով սոյն երկտող նամակը, չեն խնայի իրանց լուման նուիրելու նոյն ընկերութեան, նոցա յանձն առած գործը ժամանակակից պահանջների համեմատ առաջ տանելու համար:

Հոգաբարձուք

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказъ» լրագրում կարդում ենք որ յունիսի 15-ին քննվեցաւ Թիֆլիսի դատաստանական պալատում «Обзоръ» լրագրի նախկին խմբագիր պ. Նիկոլաձէի գործը զրպարտութեան մասին: Նիկոլաձէ մեղաւոր է ճանաչված և դատապարտված է 500 բուբլ տուգանքի:

—

Մի քանի ժամանակից վրացիները սկսել են հաւաքվել Թիֆլիսից ոչ հեռու գտնվող մի դաշտի վրա և կուռացնել իրանց հսկաներին: Այդ կռիւներին հաղարաւոր մարդիկ հանդիսատես են լինում, հիանալով այդ կռիւներով: Հանդիսականների մէջ գտնվում են և վրաց հասարակութեան ամենաբարձր ինտելիգենցիային պատկանողները:

—

Թիֆլիսի կլասիկական գիմնազիայում այս տարի աւարտած 17 աշակերտներից 9 հոգի հայեր են և մի գերմանացի: Վրացի և թուրք ոչ մի աւարտող չը կայ:

—

Ռուս դերասանական խմբի դերասան պ. Բաբիկով, որ արդէն տուել իր հրաժարական ներկայացումը և ուզեորվելու էր Թիֆլիսից, իր ընկերների և թատրոնի անտրպրէնէօրի խնդիրքով մնալու է այստեղ դարձեալ մի քանի օր: Ուրբաթ յունիսի 18-ին ռուս դերասանական խումբը պ. Բաբիկովի մասնակցութեամբ ներկայացնելու է Դիւմայի «Քին» դրամայից երեք գործողութիւններ և Օստրովսկու «Бѣдность не порокъ»: Վերջին պիեսայի մէջ պ. Բաբիկովի դերը նրա ամբողջայի ամենալաւ դերերիցն է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական համայնքների ժողովի յունիսի 13-ի նիստի ժամանակ արտաքին գործերի մինիստրի օգնական Զարլզ Դիլկ, պատասխանելով Ստաֆֆորդ Նորզսկոտի հարցին, ասեց որ Ալէքսանդրիայի մէջ հանգստութիւնը կատարելապէս վերականգնված է և որ Դերվիշ-փաշայի կարգադրութեամբ այնտեղ եղած զօրքերին օգնութիւն է հասել 12,000 զինուորներից կազմված մի զօրաբաժին: Մակկարթիի հարցին Դիլկ պատասխանեց, որ երևի Արաբի-փաշա մինչև այժմ էլ Կայիրէի մէջ է գտնվում, որովհետև նրա հեռանալու մասին ոչինչ լուր չէ ստացված: Պարլամենտի անդամներից մէկը հարցրեց, արդեօք վտանգի չեն ենթարկված եւրօպացիները, որոնք զօրքերի հեռանալուց յետոյ մնացել են Կայիրէ մէջ: Դիլկ պատասխանեց, որ եւրօպացիների մեծամասնութիւնը երևի կուզեորվի Ալէքսանդրիա, հէնց որ գլխաւոր հիւպատոսները դուրս կը գան Կայիրէից: Վերջը մինիստրի օգնականն ասեց. „Կարող եմ միայն ասել, որ թոյլ չեն տայ այժմեան անիշխանութեան շարունակվելը Եգիպտոսի մէջ: Բայց դրանից աւելի ես իրաւունք չունեմ ձեզ հաղորդել“: Դիլկ աւելացրեց, որ ծովապետ Սէյմուր, իր զրահակիր նաւերի վրա բաւական տեղ չունենալով, մասնաւոր ընկերութեան շոգենաւեր վարձեց և առաջարկեց նրանց այն եւրօպացիներին, որոնք կը ցանկանան հեռանալ Ալէքսանդրիայից: Այդ մեկնութիւններից յետոյ համայնքների ժողովը շարունակեց իրլանդական ստիպողական օրէնքների քննութիւնը:

Անգլիական համայնքների ժողովի յունիսի 14-ի նիստին Գլադստոն յայտնեց, որ կառավարութիւնը պարտաւոր է մեկնել իր քաղաքականութեան նպատակները և ոչ թէ ցոյց տալ այն միջոցները, որոնց օգնութեամբ նա կամենում է հասնել նախագծած նպատակին: Կառավարութիւնը աշխատում է պաշտպանել իր որոշ իրաւունքները և այն օրէնքները, որոնք պահպանում են այդ իրաւունքները: Գլադստոն ցաւակցութիւն յայտնեց, որ համայնքների ժողովի անդամներից շատերը բարեկամաբար չը խօսեցին Ֆրանսիայի մասին, որովհետև Ֆրանսիական կառավարութիւնը ուղղակի յայտնեց, որ նա սրտանց ցանկանում է անգլիական կառավարութեան հետ համաձայնութեամբ գործել: Նոյնպիսի համաձայնութիւն կայ անգլիական կառավարութեան և սուլթանի մէջ: Անգլիան համակարծիք է Ֆրանսիայի հետ և եւրօպական պետութիւնները նրան օգնում են: Անգլիական կառավարութիւնը համաձայն է Ֆրանսիայի այն կարծիքի հետ, որ Ալէքսանդրիայի մէջ անկարգութիւնները պատահմամբ սկսվեցան: Մի անգամ սկսված այդ անկարգութիւնները այնքան մեծ չափեր ստացան, որ եւրօպայի ուշադրութիւնը իրանց վրա դարձրին: Գլադստոն հաւատացնում է, որ թէպէտ հարցը բազմակողմանի շահեր է ներկայացնում, բայց այդ շահերը ընդհանուր նպատակ ունեն: Սուլթանը խեդիվի հետ համաձայնութեամբ է գործում, իսկ խեդիվը համաձայն է Անգլիայի հետ: Գլադստոն կարծում է, որ եւրօպական պետութիւնները ընդդէմ չեն անգլիական կառավարութեան կարծիքին եգիպտական գործերի մասին:

„ГОЛОСЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Այս շաբաթը հարուստ է քաղաքական նշանաւոր անցքերով, գրում է Բերլինից „Голосъ“ լրագրի թղթակիցը յունիսի 16-ից: Շաբաթը սկսվեցաւ Ալէքսանդրիայի մէջ պատահած անկարգութիւններով, այնուհետև լուր ստացվեցաւ ռուսաց ներքին գործերի մինիստր կոմս Իգնատիեվի հրաժարականի մասին և նոյն օրը գերմանական պետական կանցլերը իր հարկային քաղաքականութիւնը պաշտպանելու համար արտասանեց մի ճառ, որ ամբողջ երկու ժամ տևեց և որ մեծ նշանակութիւն ունի Գերմանիայի ներքին գործերի ընթացքի համար: Գերմանական պարլամենտի այդ նիստից յետոյ դարձեալ երեք նիստեր կայացան, որոնցից իւրաքանչիւրը եօթ ժամ տևեց: Վերջի վերջոյ պետական կանցլերի սիրած նախագիծը, ծխախոտի մենավաճառութեան օրինագիծը, մերժվեցաւ ձայների ահագին մեծամասնութեամբ և կառավարութիւնը հասաւ այն համոզմունքի, որ այժմեան պարլամենտի մէջ անկարելի է անցկացնել կանցլերի նախագծած հարկային և սոցիալական վերանորոգութիւնները: Իսկ իշխան Բիսմարկ հանդիսատ վարում է իր պաշտօնը նախ՝ այն պատճառով, որ չէ կամենում միայնակ թողնել ծերունի կայսրին և երկրորդ, որ ոչինչ նշանակութիւն չէ տալիս պարլամենտական մեծամասնութիւններին և այն կարծիքի է, որ խելացի բան միայն ինքը կարող է անել: Նրա արտասանած երեք ճառերի տպաւորութիւնը միատեսակ չէր: Ամենից նշանաւորն է յունիսի 12-ին նրա արտասանած ճառը, որովհետև նրա մէջ նա ընդհանուր հայեացքներ յայտնեց և հիմնաւոր նկատողութիւններ արաւ կուսակցական քաղաքականութեան անյարմարութիւնների մասին: Իսկ երբ երկու օրից յետոյ Բիսմարկ սկսեց վիճել Բիլաների և Բենինդսենի հետ և անձնական յարձակմունքներ գործեց, մի շարք անիրաւացի նկատողութիւններ և ակնարկութիւններ անելով, նա կորցրեց իր սկզբնական դրութեան բոլոր առաւելութիւնները: Գործը վերջացաւ նրանով, որ Բենինդսենի փառաւոր ճառը ոչնչացրեց իշխան Բիսմարկի ճառերի գործած տպաւորութիւնը և այդպիսով վերջին խօսքը, որ շատ նշանաւոր է, ազատամիտներին մնաց: Բենինդսենի ճառը չափազանց չափաւոր էր, յարգանքով վերա-

բերվում էր պետական կանցլերին և մի և նոյն ժամանակ մերկացրեց կառավարութեան քաղաքականութեան բոլոր թոյլ կողմերը: Պետական կանցլերին ազատամիտներից բաժանող վիհը աւելի էլ լայնացաւ, որովհետև Գերմանիայի մէջ շատ քիչ մարդիկ կը գտնվեն, որոնք համաձայն չը լինէին Բենինգսենի այն կարծիքի հետ, թէ օրէնսդրական մեծ գործունէութիւնից յետոյ անհրաժեշտ է երկրին փոքր հանգստութիւն տալ:

Իշխան Բիսմարկին նոյն օրը մի ուրիշ հարուած էլ տրվեցաւ. դատարանը արդարացրեց պրոֆէսսոր Մոմզէնին, որ կէսօրին բռնեց իր տեղը պարլամենտի մէջ և իր ընկերների շնորհաւորութիւնները ընդունեց: Առհասարակ իշխան Բիսմարկին չէն աջողվում դատաստանական այն գործերը, որոնց նա սկսում էր իրան վիրաւորողների դէմ: Բոլոր պատգամաւորները, որոնց նա դատաստանի է ենթարկել ընտրողական ճառերի համար, արդարացրած են: Մամուլը ի հարկէ աւելի վնասվեցաւ այդպիսի գործերից: Բայց պատահեց մի անգամ, որ իշխան Բիսմարկին վիրաւորող մի յօդուած տպելու համար դատաստանի ենթարկված խմբագիրը արդարացաւ, իսկ դատապարտվեցաւ մի ուրիշ խմբագիր, որ միայն արտատպեց այդ յօդուածը: Այդպիսի դէպքերում մանաւանդ վատ տպաւորութիւն է գործում այն հանգամանքը, որ իշխան Բիսմարկ, դատաստանական գործեր սկսելով, չէ գնում դատարան իբրև վկայ, երբ Նրան կանչում են, որովհետև իբրև պրուսական զօրքերի օֆիցեր կարող է պահանջել որ դատարանը առանձին ուշադրութիւն դարձնի Նրա վրա:

Նոյն օրը, երբ իշխան Բիսմարկ հանդիպեցաւ այդ երկու անաջողութիւններին, նա պատիւ ունեցաւ իր մօտ ճաշի ընդունել Վիլհելմ կայսրին, որ երևի այցելեց Նրան միխիթարելու համար:

Կոմս Իգնատիեվի հրաժարականը այստեղ լաւ տպաւորութիւն գործեց: Թէպէտ ռուսաց և գերմանական կառավարութիւնների յարաբերութիւնները վերջին ժամանակներում լաւանում էին, իսկ ռուսաց և գերմանական թաղաւորները միմեանց հետ բարեկամ էին, բայց ամենքը այն կարծիքի էին, որ կոմս Իգնատիեվի մինիստրութեան ժամանակ բոլոր միջոցները կը գործադրվէին այդ երկու երկիրների յարաբերութիւնները սառեցնելու և դուցէ պատերազմ սկսելու համար: Ամենքը երկիւղ էին կրում, որ կարող էին նոյնպիսի հալածանքներ սկսվել Ռուսաստանի մէջ ապրող գերմանացիների դէմ, ինչպէս սկսվել էին հրէաների դէմ: Ասում են, որ այդ գործը շատ հոգսեր էր պատճառում Վիլհելմ կայսրին: Կոմս Իգնատիեվի հրաժարականը թէպէտ բարձրացրեց ռուսաց արժէթղթերի գները, բայց նա աւելի էլ լաւ տպաւորութիւն կը գործէր այստեղի բօրսայի վրա, եթէ եգիպտական անցքերը չը յայտնվէին:

Եգիպտական դժուարութիւններին այստեղ հանգստութեամբ են վերաբերվում և այն կարծիքի են, որ Աղէքսանդրիայի մէջ պատահած անկարգութիւնները, որոնք պարտաւորացրին պետութիւններին որոշ դիրք բռնել, աւելի էլ պարզում են գործերի ընթացքը, քան թէ բաղադրում: Թէ որքան թոյլ են Եգիպտոսի մէջ Գերմանիայի շահերը, կարելի է դատել այն իրողութիւնից, որ եգիպտական ջրերի մէջ գերմանական միայն մի նաւ կայ, մինչդեռ միւս պետութիւնները ամբողջ նաւատորմիներ են ուղարկել Գերմանիան Եգիպտոսի մէջ առևտրական շատ թոյլ շահեր ունի:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 5 յունիս 1882

Որքան որ անախորժ լինի «Մշակի» ընթերցողաց մի վայրկեան անգամ զբաղիլ այն պարոնի անձնասորութեամբ որ «Սօսիւն» կը ստորագրէ «Մեղու» լրագրի մէջ, չեմ կարող սակայն իր վերջի օրերու մէջ մանաւանդ փոխած նամակներու առթիւ լռութեամբ անցնիլ մի կէտ՝ որ յայտնապէս ցոյց կը տայ նորա հեղինակի հոգւոյն մակերևոյթի աստիճանն և բարոյականին նեխումը: Նա իր կրքէն այնպէս կուրացած կերևի որ չէ կարողացել իր ապրիլ 28-ի (թիւ 46) նամակի մէջ զսպել իր բնութիւնն և դիտմամբ, չարութեամբ, վրէժխնդիր ոգւով, գործել է մի մատնութիւն որ յետին ոճրագործն անգամ կամաչէ գործել:

Յարձակելով մի պօլսեցի հայու անձնականի դէմ, իբր հեղինակն «Մշակի» մէջ տպուած Մ. Վ. ստորագրութեամբ նամակներու՝ նա անխղճութեամբ, վատութեամբ, առաջի կառավարութեան ցոյց կը տայ, կը մատնէ զայն իբր «Journal d'Orient»-ի Պօլսոյ թղթակիցն և այսպէսով կը հրաւիրէ տէրութեան ուշադրութիւնն այդ անձի վրայ և կենթարկէ զայն ամեն տեսակ հալածանաց:

Այս մատնութեան ինչ աստիճան հրէշային լինելն լաւ հասկանալու համար, պէտք է միտ բերել թէ ինչ է «Journal d'Orient»-ի կացութիւնն Թիւրք կառավարութեան առաջ: Սա մի օտարազգի լրագիր է որ սիստեմատիկ կերպով կը յարձակի խստիւ տաճկաց տէրութեան, տաճիկ նախարարաց վրայ և այս պատճառաւ նորա մուտքն արգելուած է Թիւրքիոյ մէջ: Եւ ոչ ոք կարող է պախարակել զթիւրք կառավարութիւնն որ այս կերպ կը վարուի այդ լրագրի հետ, ինչպէս նաև այն ամեն օտար լրագրաց հետ որք իր քաղաքականութեան նպաստաւոր չեն: Այդ շատ բնական մի բան է թիւրքաց կառավարութեան համար: Բայց այսքան միայն կարող է նա անել մի լրագրի դէմ որ իր հողի վրայ չը հրատարակուի: Բնական է նաև երբ թիւրք կառավարութիւնն հաշտ աչքով չը նայիլ այն ամեն անձանց վրայ որք մօտէն կամ հեռուէն այդպիսի մի լրագրի խմբագրութեանն կը մասնակցին. և երբ այդ մասնակցողներն իր իշխանութեան սահմանին մէջ կը բնակին՝ հարկաւ ամեն միջոց ձեռք կառնու զայս հալածելու, պատժելու համար: Ուրեմն երբ մի անձ կելէ հրապարակաւ մատնանիչ կանէ կառավարութեան որ է իսկ մի մարդ որ Թիւրքիոյ հողին վրայ կը բնակի, իբր աշխատակից այդ թշնամի թերթին, կը հարցանեմ, կարելի է աւելի ստոր մի մատնութիւն անել և ինչ անուն պէտք է տալ մի լրագրի որ իր էջերն բաց կանէ այդպիսի դաղանային մի գործի համար:

Այս տեսակ մի մատնութիւն յետին ծայր ստորացած էակներու զբաղմունքն է: Մինչև անգամ եթէ մատնուած անձն յիրաւի ցոյց տրուած պրուբիններու հեղինակն լինի՝ դարձեալ արդարանալի չէ, մինչդեռ ներկայ պարագայիս մէջ դրա ստուգութիւնն անգամ, կարծեմք պարզ մի ենթադրութեան, մի կասկածի վրայ հիմնուած է: «Journal d'Orient» և իր Կ. Պոլսոյ թղթակիցն լաւ ճանապարհի վրայ կը քայլեն: Այդ խնդիրն այլ է: Մենք այս միջոցիս աչքարձիս վրայ զբռնուած ամեն լրագրաց և թղթակիցներու ուղղութիւնն քննադատելու չենք եկած: Եթէ պ. Սօսիւն կը քամահրէ այդ անձն որ ազգային գործիչներն ոմանք ֆրանսերէն մի լրագրի մէջ ցոյց է տուել իբր 16-ղ յօդուածի հեղինակներն, այժմ դարձի եկած, նա կարող է ինքնգինքն արդարացնել կամ մեղայ ասել եթէ երբէք «Մեղու» կը կարդայ. այդ իւր գիտնալու գործն է: Մեք սա կուզենք հաստատել թէ առաւել ևս պչգալի մի գործ է երբ մի հայ, մի հայ լրագրի մէջ, լոկ ենթադրութեամբ, առանց ապացոյցի, կելնէ կը մատնէ մի ուրիշ հայ, որոյ դուցէ միակ յանցանքն է անհաճելի լինել պ. Սօսիւնի և նորա նման անձանց: Միթէ այդ վատահոգի էակն անդէտ է այն ցաւալի հետևանքներու որք պատուած են այս տեղ մի կառավարութեան ընդդիմադիր դրդէտի:

Պօլսոյ գաղանի ոստիկանութիւնն խումբերու բաժնուած է, կասեն, որք մասնաւոր ճիւղերու մէջ կաշխատին: Ոմանք փողոցներու մէջ կը հրսկեն, ոմանք սրճարաններու, կլուբներու մէջ կը գործեն, իսկ ոմանք օտար լրագրաց յօդուածներու հեղինակներն որոնելու պաշտօն ունին: Այս վերջի կարգէն է կերևի Սօսիւն անուամբ ինքզինքը ծածկող արարածը: Ուրեմն նա թիւրքիոյ գաղտնի պօլիցիայի գործակատարներէն մին է: Այս չափն բաւական է մեզ գիտնալ: Անա ճիշդ այս պատճառաւ է որ շատ թղթակիցք չեն կարող ի ստիպել հարկին երևան ելնել, քանի որ հայոց մէջ այս տեսակ վատահոգի էակներ պակաս չեն մանաւանդ Պօլսոյ մէջ:

Այսպէս ուրեմն: Այն հայն որ ասկէ ետև Սօսիւնի հետ լաւ չը վարուիլ և զայն չի շողոքորթիլ, թող երկնչի նա: Այն մարդն էլ իր կարգին պիտի ամբաստանուի Սօսիւնէն կամ իր նմաններէն իբր այս ինչ թշնամի լրագրի թղթակիցն, այս ինչ բրօշիւրի հեղինակն: Նորա վրէժխնդրութիւնն ամենադիւրին և ամենավստահ է. հակառակորդներ լռեցնելու միջոցը գտած է պարոն Սօսիւն. նա իր բնակած տեղէն աքսորել կը տայ զայն վերան մուր քսելով, վերջացաւ գնաց: Պիտի չը զարմանամ բնաւ եթէ վաղը մի ուրիշի համար, ելնէ «Մեղուի» մէջ յայտարարէ թէ կառավարութեան դէմ դաւադրութիւն կանէ կամ եւրոպական հակաթիւրք մի լրագրի հետ կը թղթակցի:

Իմ մասին՝ երանի թէ «Journal d'Orient»-ի թղթակցին ով լինելն գիտնայի, դուցէ այսպիսի մի ցաւալի եղելութեան առաջքն կառնէի հետեւեալ կերպով: Կը կանչէի խրատելու Վիէննայի լրագրի թղթակիցն որ ժամանակին գնայ գտնէ զպարոն Սօսիւն և խնդրէ անկէ որ չը յայտնէ իր ով լինելն.... ձեռքը մի մկճիդիչ դնելով:

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին Աղէքսանդրիայից հեռագրում են, որ այն լուրը, իբր թէ սպանված եւրոպացիների թիւը 250 մարդու է հասնում, սխալ է: Հիւպատոսների հաշուով միայն 46 եւրոպացիներ սպանվեցան: Ծովը գցած դիակների թիւը 30-ից աւելի չէ: Սպանվածների ընդհանուր թիւը հասնում է 80-ից մինչև 90 մարդու: Ներկայ բօպէում կատարեալ հանգստութիւն է թագաւորում:

—«Times» լրագրին Աղէքսանդրիայից գրում են: «Պետութիւնները չատ են սխալվում, երևակայելով, որ իրանք ուղիղ հասկացողութիւն ունեն Դերվիշ-փաշայի միսիայի մասին, և դէպի Արաբի-փաշան ունեցած նրա յարաբերութիւնների մասին: Մահմետականների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնների մէջ միշտ մի այնպիսի բան կայ, որ անհասկանալի է մնում եւրոպացու համար. սրանից են առաջ գալիս արևելեան քաղաքագէտների կողմից հնարված օտարոտի դէպքերը: Շատ կարելի է, որ երկու անձերից, Դերվիշից և Արաբիից, մէկը միւսի զոհ կը դառնայ: Այդ պատճառով հարկաւոր է վախճանին սպասել. և մինչև անգամ այն ժամանակ մենք չենք գիտենայ ճշդութեամբ, թէ այդ բոլորը ինչպէս պատահեցաւ: Առհասարակ մահմետականների վերաբերութեամբ հնարաւոր է միայն մէկ քաղաքականութիւն—այժը,—ինչպէս այդ պարզ ցոյց տուին ռուսները:»

—«Temps» լրագրին Յունիսից հաղորդում են յունիսի 1-ից, որ, ինչպէս և պէտք էր սպասել, եգիպտական անցքերի մասին լուրերը այնտեղ մեծ տպաւորութիւն գործեցին. ֆրանսիական ազդեցութեան թշնամիները դրանից օգուտ քաղեցին մահմետականների ֆանատիկոսութիւնը գրգռելու համար: Տրիպօլիսեան փաշան, իր կողմից, շարունակում է փողեր բաժանել տունիսեան ապստամբներին:

—Դերվիշ-փաշան հեռագրեց Բ. Դրանը, որ բրիտանական և ֆրանսիական զրահակիր նաւերի ներկայութիւնը Աղէքսանդրիայի նաւահանգստում արգելք է դառնում կարգը վերականգնելուն:

—Վիէննայի «Presse» լրագրին Բուչչուկից գրում են, որ Բօլգարիան, ինչպէս երևում է, թագաւորութիւն դառնալու մեծ ցանկութիւն ունի: Իշխան Աղէքսանդրին մէկ ադրէս է ուղարկած, որ ստորագրել են Լովչի 361 բնակիչները: Սահմանադրութեան վերականգնումն, Սան-Ստեֆանօի դաշնագրին վերադառնալը և Բօլգարիայի դէպի թագաւորութիւն բարձրանալը—ահա բօլգարացիների ազգասիրական ձգտումները: Իշխանի սրտում այդ բոլոր ցանկութիւնները թէ որչափ արձագանք կը գտնեն, դա ապագան կը ցոյց տայ:

—Սոֆիայից լրագիրներին հաղորդում են, որ պետական խորհրդի նահագահը մէկ նամակ հրատարակեց, որի մէջ նա ասում է, թէ կամ իշխան Աղէքսանդրը երկիրը կառավարելու ընդունակ է և այդ դէպքում նա իրաւունք ունի պահանջել օգնութիւն իր քաղաքականութեան համար, կամ թէ նա կառավարելու անընդունակ է, և այդ դէպքում քաղաքական բոլոր կուսակցութիւնները պարտաւոր են միմեանց մէջ համաձայնութիւն կայացնել, թէ ինչ քաղաքականութեան պէտք է հետևեն նրանք:

—Բերլինի լրագիրներին Վիէննայից հեռագրում են յունիսի 4-ից, որ նախընթաց օրը բօլգարական իշխանը այցելեց արտաքին գործերի մինիստր կոմս Կալնօկին և գերմանական դեսպան իշխ. Ռէյսին, իսկ կէսօրից յետոյ ինքն ընդունեց նրանց: Յունիսի 6-ին իշխանը պէտք է դուրս գար Վիէննայից դէպի Սոֆիա ուղևորվելու համար:

—«Polit. Corresp.» լրագրին Բէլգրադից հեռագրում են յունիսի 3-ից, որ թագաւորը հրաժարվեց ընդունել մինիստրների հրաժարականը: Մինիստրութիւնը կը մնայ, և կը լրացվի Գովարտովիչով, որպէս հասարակական աշխատանքների մինիստր:

—Գերմանական չատ լրագիրների խօսքերով, թագաւորական պրօկուրօրը բողոքեց այն վճռի դէմ, որ կայացրեց Բերլինի դատարանը, արդարացնելով պրոֆէսսոր Մոմզէնին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գարիբալդիի առաջին կինը: «Wiener Tageblatt» լրագիրը քաղում է Գարիբալդիի դեռ ևս չը հրատարակված օրագրութիւններից մէկ գլուխ «Անիտա» վերնագրով (այդպէս էր Գարիբալդիի առաջին կնոջ անունը): Այդ գլուխը մէկ ամբողջ բօման է: «Ես երբէք ամուսնութեան վրա չէի մտածում,—գրում է Գարիբալդին, որովհետև ես ինձ համարում էի մէկ այնպիսի մարդ, որ ոգու մեծ անկախութեան պատճառով, բոլորովին ստեղծված չէ ընտանեկան կեանքի համար: Ինձ համար, որ պատանեկութեան տարիներից հակամիտ էի դէպի վտանգալից և արկածախնդիր կեանքը, կին և զաւակներ ունենալու միտքը անկարելի էր թվում: Ճակատագիրը, այնու ամենայնիւ, այլ կերպ վճռեց: Լուիջի և Օդարդօ և իմ այլ ընկերների մահից յետոյ Ամերիկայում, ես մնացի բոլորովին միայնակ: Ինձ թվում էր, որ ես յանկարծ միայնակ մնացի այս մոլորակի վրա: Իմ զօրաղուռնդի մնացած մարդիկը ինձ համար բոլորովին անծանօթ անձինք էին. ոչինչ սերտ բարեկամութիւն չէր կարող գոյութիւն ունենալ մեր մէջ: Անսահման դատարկութիւն շրջապատում էր ինձ, և այնտեղ ես առաջին անգամ որ և է մարդկային էակից սիրվելու պահանջ զգացի: Որ և է մէկը պէտք է ինձ սիրէ, իսկոյն և եթ,—վճռեցի ես: Առանց դրա ինձ համար կեանքը մէկ ծանր բեռ էր երևում: Բարեկամութիւնը ժամանակի պտուղ է, պտուղ, որի հասունութեան համար տարիներ են հարկաւոր: Այլ բան է սէրը, որը մէկ կայծակ է, և կայծակի նման, յաճախ փոթորիկից է ծընվում: Բայց ինձ համար բոլորը մի և նոյն էր, որովհետև ես այնպիսի մարդկանցից եմ, որոնց համար փոթորիկը, որքան և սարսափելի լինէր նա, աւելի ախորժելի է հանգիստ և անվրդով կեանքից: Ինձ հարկաւոր էր մէկ կին, որը կարողանար բժշկել ինձ: Բայց որտեղ գտնել այդպիսի մի արարած: Այդ միտքը զբաղեցնում էր ինձ երկար ժամերի ընթացքում, որ ես անց էի կացնում իմ սենեակում Itaparika նաւի վրա, ուղղելով հայեացքներս դէպի ցամաքը, որ ինձանից չատ մօտիկ էր գտնվում: Իմ նաւից ես կարողանում էի տեսնել ամենամօտիկ ափերը և մէկ տան մօտ մի քանի երիտասարդ աղջկերանց պատկերներ նկատեցի, որոնք տնային գործերով էին պարապած: Նրանցից մէկի վրա ընկաւ իմ ընտրութիւնը: Այդ աղջիկը անդադար գրաւում էր իմ ուշադրութիւնը, և վերջապէս իմ վճիռը կայացաւ: Ես նստեցի նաւակը և ուղիղ լողալով գնացի դէպի այն տունը, որ արդէն մի քանի օր աչքիցս չէի կորցնում: Սիրտս սաստիկ բարախում էր, կարծես թէ կուից առաջ լինէր: Ես մօտեցայ տանը: Դրան առաջ նստած տղամարդը հրաւիրեց ինձ մտնել: Եթէ չը հրաւիրէր էլ, ես կը մտնէի: Ես տեսայ երիտասարդ աղջիկան, որը մի քանի օր արդէն գրաւում էր իմ հայեացքները, և, ուղղակի մօտենալով նրան, ասեցի. «Դու իմը կը լինես:» Ես ասեցի, և այդ խօսքերը մէկ այնպիսի կապ դարձան, որին միայն մահը կարող էր կտրել:» Այդ առաջին կինը, ինչպէս յայտնի է, Գարիբալդիի անդաժան ուղեկիցն էր նրա բոլոր վտանգաւոր արշաւանքների մէջ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունիսի։ „Journal de S. Petetbourg“ հերքում է ռուս-պարսկական գաղտնի դաշնագրի մասին լուրը։ „С.-Петерб. Вѣд.“ լրագիրը հաղորդում է, որ 1883 թուականից խերսօնի մէջ կը բացվի առաջնակարգ մաքսատուն։

Կ. ՊՕԼԻՍ, 15 յունիսի։ Սուլթանը ուղարկեց Արաբի-փաշային Մեջիդիէ շքանշանը առաջին կարգի, իսկ խեդիվին բրիլիանտներով զարդարած մի ընծայ 'ի յիշատակ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 50½ կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 37½ կ., չորրորդ 90 ր. 25½ կ., հինգերորդ 90 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 217 ր., երկրորդ 209 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 50 կ., երկրորդ 89 ր. 50 կ., երրորդ 89 ր., ոսկի 8 ր. 24 կ։ Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 24,9 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 205 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 252 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկուշաբթի օրից, յունիսի 14-ից, Թիֆլիսի Սերգիեվսկայա փողոցում, Շահպարոնեանցի տանը № 4, բացվում է ՄԱՆԿԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ։

Դրադարանը բաց կը լինի առաւօտեան 9 ժամից, մինչև 6 ժամ երեկոյեան։

2—3 (Ե. Հ. շ.)

ՍՏԱՑՎԱԾ Է գրելու թուղթ առաջին տեսակի 4 ր. 50 կ. օզման, բրինձ 6, 8 և 9 կ. ֆունտը, խինայս գինի ջերմիդում 1 ր. 40 կ. շիշը, փոշի տարափոխիկ հիւանդութեան դէմ, լուացքի և սամովար սրբելու համար։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷՅ**։ Նոյն տեղը լէպէշկաներ, ցեարադ և շերբետ ծարաւի դէմ։ Ծածկոցներ 4 ր., շօկոլադ երկու բաժակի համար 5 կոպէկ։ Երկաթէ մահճակալներ 8 ր. և այլն։

1—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ. հիմնվելով Բարձրագոյն հաստատված քաղաքային կանոնադրութեան 17 և 22 յօդուածների և ներկայ թվի մայիսի 3-ին կայացած քաղաքային Դումայի վճռի վրա, հրաւիրում է պ. պ. տանտերերին, որոնք ցանկանում են մասնակցել առաջիկայ քաղաքային ընդհանուր ընտրութիւններին 1883—1886 քառամեակի համար, մտցնել քաղաքային գանձարանը անպատճառ մինչև 1 յուլիս ամսի ներկայ թվի, իրանց կայքերի վրա հաշուող բոլոր ապառիկները գնահատական հարկի։ Սորա հետ վարչութիւնը նախազգուշացնում է որ այն անձինք, որոնք մինչև նշանակված ժամանակ չեն մտցնի ամբողջութեամբ բոլոր ապառիկները, որ նրանց վրա հաշուում են, հանված կը լինեն ընտրողական ցուցակներից։

2—3

ԴԱՎՐԷԺ քաղաքում, Պարսկաստանում, ցանկանում եմ ընդունել ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ամեն տեսակ գործեր կոմիսիոնով։ Իմ հասցէն է. Դավրէժ, Մինաս ԳՈՒԼԶԱՏԵԱՆՑ։

3—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԺՕՐԺ ՍԱՆ 'Ի

„ՎԱՐԴԱԳՈՅՆ ԱՄՊ“

Մանկական վէպը։

Ծախվում է 'ի նպաստ մի չքաւոր աշակերտի կենտրոնական և կովկասեան գրախանութներում։

ԳԻՆՆ Է 25 Կ.։

Ներսիսեան դպրանոցի բարձր դասատան աշակերտներից մինը կամենում է պատրաստել աշակերտներ և աշակերտուհիներ՝ բոլոր Հայ դպրոցների ստորին և միջին դասատանց համար։ Ցանկացողք թող դիմեն Յովհաննէսի կարվանսարայում պ. Գրիգոր կակեանի խանութը № 1.

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԱՆՈՒՆՈՎ ԳՐՔՈՅԿԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ.

Խնդրում ենք այն անձինքներից թէ Բաքու և թէ այլ քաղաքներ, որոնց մօտ գտանվում են այդ գրքոյկի բաժանորդական թերթեր մինչև յունիսի 20-ը մեզ հասցնել.

Թերթերը պիտի ուղարկուին ուղղակի իմ հասցէին. Баку. „Россійскій магазинъ“ Абелу Апресянцу. Մինչև յուլիսի վերջը մեզ ուղարկուած բաժանորդական թերթերի մասին մի երկրորդ նամակաւ մեզ տեղեկութիւն տալ խնդրում ենք ուղարկող պարոններից, երկու թերթ մեզանում պակաս լինելուն առթիւ։

Բաժանորդներին յանձնելի գրքերը արդէն տպագրութեան տակ են Թիֆլիսում։

Հրատարակիչ.—Աբել Ապրեսեանց.

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Դրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

ТЕХНИК принимает работы: по механическому дѣлу, производству чертежей на проэкты построек. Также желает имѣть мѣсто на заводѣ или фабрикѣ, подходящихъ к спеціальности.

Стар. Арсенальная д. № 28. Н. С. Л.

ՏԵԽՆԻԿ ընդունում է աշխատանքներ մեքենայական գործերի մէջ, ընդունում է պատուէրներ գծագիրներ և շինութիւնների պրօէկտներ պատրաստելու, պատրաստ է պաշտօն ընդունել մի գործարանի կամ ֆաբրիկայի մէջ իր մասնագիտութեանը յարմար։

Հասցէն վերև կարդացէք։

3—4

КВАРТИРЫ

Въ 4 и въ двѣ комнаты отдаются въ наемъ, на Католическомъ переулкѣ домъ № 11, противъ дома *Андроникова*.

Желающіе могутъ взять весь домъ въ АРЕНДУ.

Справляться тамъ-же отъ 9 до 12 часовъ утра и отъ 5 до 7 часовъ по полудни.

1—3 (2)

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսուն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ։

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКІХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ վերջացրել է Ռուսաստանի մէջ **ԿԱՆԱՆՑ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ** 8-դ դասատունը և գիտէ ֆրանսերէն և գերմաներէն **ԼԵԶՈՒՆԵՐԸ, ԴԱՍԵՐ** է տալիս։ Սալդատսկի բազար, Պօլիցէյսկայա փողոց տուն № 15։

1—3 (2)

ՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ երիտասարդ կամենում է ԾԱՌԱՅ մտնել մի տան մէջ Թիֆլիսում, կամ Թիֆլիսից դուրս։

Նախապատուում է հայերի մօտ ծառայել։

Հասցէն թողնել „Մշակի“ խմբագրութեան մէջ։

1—5

Թողնելով Թիֆլիս ընդմիշտ, ԱՆԳԼԻԱԿԱՆ մագազինի տէրը ԾԱԽՈՒՄ Է այժմ իր ամբողջ ապրանքը ԴՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԳՆԵՐԻՑ ԷԺԱՆ, իսկ ապրանքների մեծ մասը ԿԻՍԱԳՆՈՎ։

Օգուտ քաղեցէք այդ հազուագիւտ դէպքից։

Ուրիշ այդ տեսակ դէպք ներկայանալու չէ Թիֆլիսի և նրա շրջակաների բնակիչներին։

1—3

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուռմիվալնիկներ մրամրօնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ըէվոլվէրի, սիգար Ռէնդարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պագնոմներ սամովարի և չայու, դանակ չանդալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. գուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիրի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնների 1—40 մինչև 3—20 կ. պրիբորմիս կարելու մաշինայ. Անգլիական ուլթներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերաներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդաներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց դալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոգի, պոլի և կարտի համար. չուլքի թել (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմոնեներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ). միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հեռևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

73—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

S'adresser à F. Salles, avocat

1. Neuermarkt 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Іюня 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., каз. д.